ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի ուղերձը Հայաստանի Հանրապետության Անկախության 25-րդ տարեդարձի առթիվ

Հարգելի հայրենակիցներ

1991 թվականի սեպտեմբերի 21-ի հանրաքվեի արդյունքում ձեռք բերված Անկախության շնորհիվ հայ ժողովուրդը պատմական հնարավորություն ստացավ՝ վերակերտելու իր ազգային ու ինքնիշխան պետությունը, ստեղծելու Հայաստանի ու Արցախի անվտանգության հիմնական երաշխավոր հանդիսացող Հայոց հաղթական բանակը, ձեռնարկելու Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման ծանրակշիռ քայլերը միջազգային ասպարեզում, միավորելու Հայրենիք-Սփյուռք ջանքերը համահայկական նպատակների իրականացման շուրջ, ընտրելու ժողովրդավարական, խաղաղ ու ապահով Հայաստան կերտելու հաստատուն ճանապարհը:

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Հայաստանի Հանրապետության Անկախության 25-րդ տարեդարձի առթիվ, ցանկանում խաղաղ ու անհոգ տարիներ, համազգային նորանոր հաղթանակներ ու ձեռքբերումներ, տոնական բարձր տրամադրություն:

Ջերմ բարեմաղթանքներով՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան